

**EMBARGOED: Not for news wire transmission, posting on websites, or any other media use until October 12, 2005, 13:00 GMT (9 a.m. EDT, Washington time)**



# The World Bank

News Release No. 2005/402/S

**Contacts:**

Merrell Tuck-Primdahl, work ph# 202 473-9516

Global mobil # 202 415-1775

[mtuckprimdahl@worldbank.org](mailto:mtuckprimdahl@worldbank.org)

**Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միությունում աղքատությունը նվազում է, բայց մարտահրավերները մնում են**  
*Համաշխարհային բանկի հաշվետվությունը վերլուծում է 1998-2003թթ. տնտեսական աճի ազդեցությունը*

Վաշինգտոն, հոկտեմբեր 12, 2005թ. – Կենտրոնական և Հարավ-արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միության երկրներում մոտ 40 միլիոն մարդ դուրս է եկել աղքատությունից 1998-2003թթ., որպես արագ աճի և անհավասարության կրճատման արդյունք, ասվում է Համաշխարհային բանկի այսօր հրապարակված զեկույցի մեջ: Համաձայն զեկույցի\* տարածաշրջանում ապրող աղքատ մարդկանց քանակը 2003թ. 61 միլիոն էր կամ բնակչության 12 տոկոսը՝ 1998թ. 20 տոկոսի հետ համեմատությամբ:

Տնային տնտեսությունների սպառման հետազոտություններն են օգտագործվել զեկույցի մեջ ներառված 27 երկրների կենսամակարդակի ստանդարտների համեմատական ցուցանիշը ձևավորելու համար: Օրական 2 ԱՄՆ դոլարի բացարձակ աղքատության գիծն է օգտագործվել հիմնական երկրներում՝ հաշվի առնելով ցուրտ կլիմայում ջեռուցման և տաք հագուստի գները: Տարածաշրջանում հավելյալ 153 միլիոն մարդ է բնակվում օրական 4 կամ պակաս ԱՄՆ դոլարով և նրանք դիտարկվում են, որպես տնտեսապես խոցելի, քան թե աղքատ:

*«Այս զեկույցը ցույց է տալիս, թե ինչպես են անցման փուլով արդեն ցնցված երկրները կարողացել միլիոնավոր մարդկանց հանել աղքատությունից՝ 1998թ. Ռուսաստանի ֆինանսական ծզնաժամի ալիքի վրա: Այս շրջադարձը կարևորում է աճի կարևորությունը՝ պայմաններ ստեղծելով ավելի լավ կյանքի համար: Սա կայուն պահելու համար ավելի շատ աշխատատեղեր են պահանջվում ետ մնացածների համար, մասնավորապես գյուղական վայրերում և տարածաշրջանի որոշ երկրորդական քաղաքներում»,* ասաց Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) Համաշխարհային բանկի փոխնախագահ Շիգեո Կացուն:

\* Աճ, Աղքատություն և Անհավասարություն Արևելյան Եվրոպայում և Նախկին Խորհրդային Միությունում, Համաշխարհային Բանկ 2005թ: Սա «Making Transition Work for Everyone» աշխատության շարունակությունն է, Համաշխարհային Բանկ 2000թ.:

Ձեկույցն առաջարկում է շարունակել ձեռնարկությունների բարեփոխումները, գյուղական աճի խրախուսումը և ետ մնացող տարածաշրջաններում հնարավորությունների խթանումը: Հաշվետվության մեջ նշված սահմանված բարեփոխումների այլ առաջնահերթությունները ներառում են հիմնական ծառայությունների բարելավումը և ավելի լավ, թիրախավորված սոցիալական պաշտպանության բարելավումը, մասնավորապես աշխատող աղքատների և երեխաների համար:

Համաձայն զեկույցի 1998-2003թթ. աճի զարգացումը հիմնականում պայմանավորված էր Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրներով: Ռուսաստանի դերը առանցքային է՝ հաշվի առնելով վերջինիս նավթային հարստությունը և կարևորությունը տարածաշրջանում առևտրային և միգրացիոն հոսքերում: Միևնույն ժամանակ Եվրոմիության (ԵՄ) ինտեգրացումն օգնել է ընդլայնել շուկաները և ներդաշնակեցնել բարեփոխումները նոր անդամակցող պետությունների համար: Արևմտյան Բալկաններում պատերազմի ավարտը տնտեսական միջավայրը դարձրեց ավելի գրավիչ ներդրումների և աճի համար:

1998-2003թթ. աղքատությունը նվազել է տարածաշրջանի հիմնական երկրներում: Բացարձակ աղքատության ամենաբարձր մակարդակները գրանցվել են Կենտրոնական Ասիայի պետություններում, ինչպիսիք են Տաջիկստանը աղքատության 70 տոկոս ցուցանիշով և Հարավային Կովկասը, որտեղ օրինակ Վրաստանում աղքատության աստիճանը 2003թ. 50 տոկոս էր: Այնուհանդերձ տարածաշրջանի անցումնային երկրների աղքատների և խոցելիների մեծ մասը միջին եկամտի երկրներում են, ինչպիսիք են Ղազախստանը, Լեհաստանը, Ռուսաստանը և Ուկրաինան: Ամենամեծ ռիսկի տակ են գտնվում երիտասարդները, գյուղական վայրերի և երկրորդական քաղաքների բնակիչները: Գործազուրկները, թեր կրթությամբ անձինք և թեր արտոնություններով փոքրամասնությանը պատկանող մարդիկ, ինչպիսիք են գնչուները, նույնպես գտնվում են ռիսկի գոտում: Հիմնական աղքատները աշխատող աղքատներ են:

**Աղքատության պատասխանն աճին:** Ըստ հաշվետվության մի քանի արագ աճող երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը և Ղազախստանը, գրանցվել է դեպի աղքատները եկամտի բաշխման շարժ: Սրա արդյունքում աղքատությունը ավելի արագ է նվազել, քան ակնկալվում էր: Ի տարբերություն վերջիններիս Վրաստանում և Լեհաստանում բաշխումը չի ուղղորդվել դեպի աղքատները և փաստացիորեն աղքատությունն աճել է: Աղքատության ամենակտրուկ նվազումը գրանցվել է մայրաքաղաքներում:

**Գործազուրկների աճ:** Շատ քիչ երկրներում, նույնիսկ այնտեղ, որտեղ աղքատության հաղթահարման ուղղությամբ ամենամեծ աճն է գրանցվել, բավարար աշխատեղեր չեն ստեղծվել: Աշխատատեղեր ստեղծելու այս անհաջողությունը նշանակում է գործազրկության աճ, բացառությամբ մի քանի արագ աճող երկրների, ինչպիսիք են Ղազախստանը, Ռուսաստանը և Ուկրաինան: ԵՄ նորանդամ պետություններում և Հարավ-արևելյան Եվրոպայի երկրներում զբաղվածության աստիճանը, որը ներկայումս 56 տոկոս է, բավական ցածր է Եվրոմիության կողմից սահմանված այսպես կոչված Լիսսաբոնյան 70 թիրախից:

**Անհավասարություն:** Ըստ զեկույցի, ընդհանուր առմամբ ԱՊՀ-ում տնային տնտեսությունների ապրանքների և ծառայությունների սպառմամբ չափված անհավասարությունը նվազել է: Այս օրինակը պակաս ակնհայտ էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, Բալթյան պետություններում և Հարավ-արևելյան Եվրոպայում:

2003թ. դրությամբ տարածաշրջանում սպառման անհավասարությունը համեմատելի էր Արևելյան Ասիայի կամ Նույնիսկ աշխարհի որոշ հարուստ երկրների պես համեմատաբար հավասարակշռված տարածաշրջանների հետ: Այնուհանդերձ դեռ մնում են մեծ տարածաշրջանային անհավասարությունները թե երկրների միջև, թե երկրների մեջ:

Որակյալ ծառայությունների հասու մատչելիությունը: Ըստ զեկույցի կրթության, առողջապահության, ապահով խմելու ջրի, ջրահեռացման և ջեռուցման մատչելիության միտումների պակաս ներշնչող են: Անհավասարությունները գոյություն ունեն լավ դպրոցների, առողջապահության, հուսալի ջրամատակարարման և էներգետիկայի մատչելիության ոլորտում: Որոշ դեպքերում դրանք ավելացել են, մասնավորապես ԱՊՀ-ում: Տաջիկստանում, օրինակ, ջրի հուսալիությունը բացառությամբ բնակչության վերին մեկ հինգերորդից նվազել է բոլորի համար:

Պետական քաղաքականության և ապագա հեռանկարների դերը: Չեկույցը զգուշացնում է, որ առանց աշխատատեղերի աճման միտման՝ ավելի քիչ մարդ դուրս կգա աղքատությունից: Եթե հիմնական ծառայությունների աճող անհավասարությունները չփոխվեն, ապա դրանք կթուլացնեն աճի նպաստավոր ազդեցությունները:

Աճն արագացնելու և այն հանուն աղքատների գործածելու համար հեղինակները կոչ են անում՝

- խորացնել մասնավոր հատվածի բարեփոխումները՝ խրախուսելով հին, պակաս արտադրողականությամբ ընկերությունների միջոցների տեղափոխումը դեպի նոր, ավելի արդյունավետ ընկերություններ,
- ձևավորել քաղաքականություններ, որոնք կխթանեն գյուղատնտեսությունն ու գյուղական աճը՝ ինտեգրելով գյուղական վայրերը մնացյալ տնտեսության մեջ կապված աշխատուժի և կապիտալի շուկաների, վարկերի, առևտրի և ծառայությունների մատչելիության առումով,
- ետ մնացող տարածաշրջաններում ավելի մեծ հնարավորությունների ստեղծման ջանքեր գործադրել,
- բարելավել հիմնական ծառայությունների որակը և պահպանել դրանց մատչելիությունը աղքատների համար ու
- ավելի բարելավել սոցիալական ապահովությունը:

*«Աճի ներկայիս տենպերով մենք կանխատեսում ենք, որ մինչև 2007թ. մոտ 40 միլիոն մարդ դեռ աղքատ կմնա և մոտ 110 միլիոն մարդ՝ տնտեսապես խոցելի: Հաշվի առնելով սա և մարդկային զարգացման նպատակների ձեռքբերման սպառնալիքը, էական է, որ կառավարություններն աշխատեն արագացնելու աճը և ապահովեն, որ բոլորը դրանից օգտվեն»* եզրակացնում է Համաշխարհային բանկի ԵԿԱ բաժնի զենդերի, աղքատության և մակրոտնտեսության ոլորտի կառավարիչ և զեկույցի թիմի ղեկավար Ասադ Ալամը:

-- ### --

*Լրագրողները կարող են ծանոթանալ նյութի հետ նախքան նյութի հրապարակման թույլտվության ժամկետը Համաշխարհային բանկի ինտերնետային էջից՝*

*<http://media.worldbank.org/secure>*

*Հավատարմագրված լրագրողները, որոնք դեռ գաղտնաբառ չունեն, կարող են խնդրել այսպիսի գաղտնաբառ՝ լրացնելով գրանցման ձևը՝ <http://media.worldbank.org/>*

*Ձեկույցը և դրա հետ կապված նյութերը ինտերնետում հանրության համար մատչելի  
կլինեն, քույրատվության պահից անմիջապես հետո՝  
<http://www.worldbank.org/eca/ecapovertyreport>*